

6. Քննութիւն և վաւերացում հայ ազգին Թիւրքիոյ և Կովկասի մէջ այս պատերազմի ընթացքին կոտորածներու, տեղահանութեան և այլ աղէտներու հետեանօք կրած վնասներուն հատուցման վերաբերող Յիշատակագիրին, որ ներկայացուցաւ Խաղաղութեան Վեհաժողովին և որուն համաձայն վերոյիշեալ վնասուց ամբողջական դումարը կը յանգի 19 միլիառ 130 միլիոն 982 հազար Փրանքի: Այս դումարին 14 միլիառ 598 միլիոն 510 հազարը արեւմտեան հայոց պահանջներուն և մնացեալ 4 միլիառ 532 միլիոն 472 հազարը արեւելեան հայոց պահանջներուն համար:

7. Քննութիւն և վաւերացում ելեմտական յանձնաժողովին կողմէ Ազգ. Պատւիրակութեան յառաջիկայ վեց ամսեան գործունէութեան համար պատրաստած ելեմտացոյցին, որուն համաձայն ազգային զանազան պէտքերու համար նւազագոյն 15 և առաւելագոյն 30 միլիոն Փրանքի ծախուց դումար մը կը նախատեսուի, հասոյթի զանազան եղանակներու առաջարկութեամբ, որոնց յարմարագոյն գործադրութիւնը յանձնուած է նոր Ազգային Պատւիրակութեան:

8. Քննութիւն և վաւերացում յատուկ յանձնաժողովի մը կողմէ պատրաստած նոր Ազգ. Պատւիրակութեան տրեւիք ուղեցոյցներու (տիրէքթիւ) ծրագրին, որուն մէջ մանրամասնուած են պետութեանց հետ բանակցութիւններու ընթացքին Պատւիրակութեան հետեւելիք ուղղութիւնն ու զննելիք պահանջները՝ հիմնուած Յիշատակագիրի գլխաւոր սկզբունքներուն վրա:

9. Քննութիւն և վաւերացում Հայկական Լեզէոնի ներկայ վիճակին, կամաւորներու վերստին յանձնառագրումին և Լեզէոնի ասպազայ գործածութեան հարցերուն մասին յատուկ յանձնաժողովի մը կողմէ բերուած առաջարկներուն:

10. Քննութիւն Պատւիրակութեան տրեւիք ուղեցոյցներու առթիւ վերապահուած յաւելածական մասի մը, որով կը փափաքէր Համագումարի ընթացքին իսկ կարելի դարձնել թրքական և ռուսական Հայաստաններու միացումը՝ միակ ներկայացուցչութեան մը և միակ կառավարութեան մը ստեղծմամբ. յետ բազմաթիւ խորհրդակցութեանց որոշեցաւ սոյն խնդրոյն իրականացումը յանձնել նորընտիր Պատւիրակութեան՝ ըստ ուղեցոյցներու տրամադրութեան:

11. Ընտրութիւն ապրիլ 2-ի նիստին մէջ Հայ Ազգային Պատւիրակութեան՝ բաղկացած վեց անդամէ, որ, համաձայն նոր Պատւիրակութեան համար ընդունուած ուղեցոյցներուն, Հայ Հանրապետութեան Պատւիրակութեան հետ կը կազմէ «Ամբողջական Հայաստանի Պատւիրակութիւնը» և անոր հետ միասին պիտի աշխատի ձեռք բերել Յիշատակագիրով բանաձեւած հայկական պահանջներու գործադրութիւնը և պիտի հետապնդէ ազգային դատին յարակից բոլոր հարցերուն բարւօք լուծումը: Նորընտիր Պատւիրակութեան անդամ ընտրուեցան՝ վսեմ. Պօղոս փաշա Նուպար, Պ. Պ. Իրոֆ. Տէր-Յակոբեան, Ա. Զոպանեան, Գ. Փաստրմաճեան, Ղոբտ. Յ. Նեվրուզ, Վ. Թեքէեան:

12. Քննութիւն Հայկական Վնասուց Հատուցման Յիշատակագիրին վրա աւելցելիք նոր յուշագրի մը՝ վնասուց պատասխանատուութեան և դանձման վերաբերեալ: Սոյն յուշագրին ամբողջացումն ու առաքումը յանձնեցաւ Պատւիրակութեան: